**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

N 394 – Ա

29 հուլիսի 2021 թ.

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԼԱՈՒՐԱ ՍԱՐՄՈՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 69-րդ կետի, 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված 1-ին կետի պահանջներն ու Ռաֆայել Սիմոնյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Ռաֆայել Սիմոնյանին տրամադրել 2021 թվականի ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործված մասը՝ 2021 թվականի օգոստոսի 2-ից օգոստոսի 24-ը ներառյալ (20 աշխատանքային օր):

2. Ռաֆայել Սիմոնյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 2 միջնակարգ

դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականությունների կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Լաուրա Սարմոսյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

29.07.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ